



ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊ. ՆՇԱՆՅԱՆ

ՀՈԳԵԳԱԼՈՒՍ*

«Հոգին սուրբ, զոր առաքեցի Հայր լանուն իմ,
նա ուսուցի՛ ձեզ զամենայն»:

(Յովն. ԺԴ 26)

Թագավոր մարգարեն Դավիթ քանի մը քառերու մեջ խոսացուցած է տիեզերքի հրաշալի ստեղծագործությունը. «Ասաց եւ եղեն, հրամայեաց և հաստատեցան»: Արդարեւ երբ Արարիչը կամեցավ ոչինչէն գոյացնել երկինքն ու երկիրը՝ խոսքով միայն հրամայեց և երկինքն ու երկիրը ստեղծվեցան:

Հրամայեց, և լույսը ժայթքեց համատարած խավարի մեջէն:

Հրամայեց, ու իր արարչագործ խոսքով աստղերու ոսկեգույն գունտերը սփռեց երկինքի կապույտին վրա ու հոն հաստատեց այն երկու լուսավորները, որոնց մեկը կիշխն ցերեկին ու մյուսը գիշերին:

Հրամայեց, ու երկրի երեսը ծածկվեցավ կանաչ մարգագետիններով, զարդարվեցավ ծառերով ու ծաղիկներով, գեղեցկացավ տուններով ու պտուղներով շենցավ ամեն տեսակ կենդանիներով:

Դարձյալ հրամայեց, ու այս անգամ գործը միացուց խոսքին, վասնզի կարգը եկած էր աշխարհի ամենէն կատարյալ արարածին ստեղծագործության, ու ձևակերպվեցավ մարդկային մարմինը ու անմիջապէս կենդանացավ՝ ընդունելով Աստուծո շունչը:

Արդարեւ հոյակապ ու հրաշալի արարչագործություն: Մեր մեջէն ո՛վ զայն տեսնելով պիտի չգոչեր Դավթի հետ. «Ո՛րպիսի մեծ են գործք քո, Տէր»: Աստուծո խոսքը ո՛րքան զորավոր է ու անոր արդյունքները ո՛րքան հրաշալի:

* Խոսված ի ս. Փրկիչ, 11/24 մայիս 1942, հավուր տունի Գալստյան Հոգվույն սրբո:

Եվ սակայն, ի՞նչ են այս ամենը համեմատելով այն մյուս հրաշքին հետ, զոր ավելի հետո Աստուծո խոսքը կատարեց հոգիներու աշխարհին մեջ՝ ներգործելով ու ազդելով մարդոց սրտերուն ու խղճմտանքներուն վրա:

Տիեզերքի ստեղծագործության ատեն Աստուծո խոսքը նախ և առաջ ներգործած է ոչնչության վրա, ապա՝ կամքե ու բանականությամբ գործելու միջոցին վրա: Աստված կհրամայե նյութին և նյութը կհնազանդի իր Արարչին: Իսկ երկրորդ արարչագործության ատեն Աստուծո խոսքը կներգործե միտքերու և սիրտերու և կամքերու վրա, որոնք ազատ են կա՛մ հնազանդելու և կամ ընդդիմանալու: Այդ խոսքը, այդ, կիշխե մարդկային հպարտ իմացականության վրա, կշահի ապականչալ հոգիները, կնվաճե ապաստամբ կամքերը, ու կարող կըլլա համոզել բանական բայց ազատ արարածները որ հրաժարին իրենց ցանկություններեն, իրենց հաճույքներեն, փառքե, պատիվներե, ճոխություններե՝ ըլլալու համար աշակերտներն ու հետևողները նազարեթցի Վարդապետի մը, որ խաչված էր երկու ավազակներու միջև:

Ահավա՛հ՝ սքանչելիքը. ահավա՛սիկ հրաշքը, որուն պետք է անդրադառնանք Պենտեկոստեի այս մեծ տոնին օրը, որ հիշատակելի տարեդարձն է մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի եկեղեցիին հաստատության երկրի վրա:

Մարդը, ըսած է Փրկիչը, ոչ թե միայն հացով կապրի, այլ նաև Աստուծո բերնեն ելած խոսքով: Այո՛, պետք է որ մեր իմացականությունը սնանի ճշմարտությամբ ու մեր սիրտը՝ առաքինությամբ: Այս երկու բաները, այսինքն՝ ճշմարտությունն ու առաքինությունը տրված են մարդուն հավատքի՝ Աստուծո այս գերազանց պարգևին շնորհիվ: Ասիկա է որ կկազմե այսօրվան խորհուրդը:

Ա.—Ճշմարտությունը տրվեցավ առաքյալներուն և Հոգիին միջոցով:

Բ.—Անկիս տրվեցավ առաքյալներուն, որպեսզի անոնք ալ, իրենց կարգին, ալ ճշմարտությունը ավանդեն աշխարհի՝ իրենց քարոզությամբ: Այս երկու կետերուն վրա է որ հիմա կփափագիմ ուշադրությունը հրավիրել բարեպաշտ ունկնդիրներուդ:

Ա.

Մարդուն ստեղծագործությունը ամենատարբերությամբ գործը ըլլալով, կրսե եկեղեցվո հայրերեն մեկը, անոր երկրորդ այսինքն հոգեկան ստեղծագործությունն ալ պետք էր որ աստվածային երեք անձնավորության միջոցով ըլլար: Հայրն Աստված

աշխարհ կղրկե իր հավիտենական Բանը կամ Միածին Որդին, որ մարդկային կերպարանք կզգեճնու ու մեզ վերստին գնելու համար կմեռնի Խաչին վրա ու կհիմնե իր եկեղեցին: Ապա սուրբ Հոգին կավարտե Հոր և Որդվոյն գործը՝ հիշեցնելով Վերնադարձ մեջ խմբված առաքյալներուն այն ամեն ճշմարտությունները, զորս առաքյալներն ալ, իրենց կարգին, պիտի տրվեցնեին մարդոց՝ ապահովելու համար անոնց հավիտենական կյանքը:

Հիսուս ըսած էր իր աշակերտներուն. երբ ես երկինք վերանամ՝ սուրբ Հոգին պիտի դրկեմ, ու Ան պիտի տրվեցնե ձեզ ամեն բան: Առաքյալները ուսուցանելու գործը, զոր սկսած էր իրենց աստվածային Վարդապետը, պիտի ավարտեր ու պիտի կատարելագործեր լույսի ու իմաստության սուրբ Հոգին:

Ահա թե ինչո՛ւ համար առաքյալները, որոնք թեև սկիզբեն ընտրված էին Ավետարանը քարոզելու աշխարհի, Երուսաղեմ կրման հար տաանձնության և ստորքի ու լույսի մեջ: Ըսած էր Հիսուսը իրենց. «Գնացե՛ք այստե՛տև, քարոզե՛ք զամենայն հեթանոսս»: Ինչո՛ւ ուրեմն անոնք կրպասեին: Ո՛վ կարգիլեր անոնց հեռանալը Երուսաղեմեն: Ո՛հ, չկարծե՛ք թե այս կամ այն նկատումներ, կամ չարչարանքներու և մահվան երկյուղը, կամ իրենց Վարդապետին կողմն ախալ ճամփու մը մեջ մղված ըլլալու կասկածն էր որ սպասեցնել կուտար գիրենք: Ո՛չ, եթե անոնք չէին մեկնել՝ պատճառն այն էր որ Հիսուս ինք պատվիրած էր չհեռանալ Երուսաղեմեն՝ մինչև որ զգեճնու գործությունը սուրբ Հոգիին, որ լիովին պիտի լուսավորեր իրենց միտքն ու իմացականությունը հավատքի լույսով: Առաքյալները կապասեին՝ որպեսզի ի վիճակի ըլլային խոսելու բոլոր լեզուներով, բոլոր բարբառներով այն ժողովուրդներուն որոնց պիտի երթային քարոզելու երկինքի արքայության Ավետարանը: Կապասեին՝ որպեսզի երկինքն իրենց ընդունելիք գործությամբ ու անպարտելի արիությամբ կարենային ընկրճել իրենց տկարությունն ու վեհերոտությունը:

Առաքյալները անշուշտ սրտովին կցանկային Հիսուսի Ավետարանը տարածել աշխարհի բոլոր ժողովուրդներուն մեջ, որպեսզի զանոնք ամենքը խոնարհեցնեին Խաչի պատվանդանին առջև, բայց համոզված էին թե այդ բանին համար սուրբ Հոգին ընդունելու պետք ունեին, որպեսզի կարենային հանդիմանելու աշխարհը՝ մեղքի և արդարության և դատաստանի համար: (Մեղքի համար՝ եթե չհավատային Հիսուս

Քրիստոսի, արդարության համար՝ անչեզե-
րով Հոր Աստուծո աջ կողմը բազմած Աստ-
վածորդին, դատաստանի համար՝ սորվեց-
նելով թե նույն Աստվածորդին սահմանված
է ըլլալ դատավոր կենդանաց և մեռելոց): Այդ, առաքյալները կցանկացին վկայել Հի-
սուսի Քրիստոսի, բայց ատոր համար կարե-
վոր էր, որ սուրբ Հոգին նախապես պատ-
րաստեր գիրենք այդ վկայությունը տալու:
Ուստի անոնք խմբված վերնատան մեջ՝ այդ
աստվածային այցելուին գալստյան կապա-
սեին: Եվ ահա վերջապես կոտեսնեն սուրբ
Հոգիին իջնելը: Հիսուսի երկինք համբառ-
նալուն տասներորդ օրն է, օդը խաղաղ է և
երկինքը պայծառ: Հանկարծ մեծ աղմուկ մը
կրպի՛ նման սաստիկ հուլի մը հանած ձա-
նին ու իրենց գտնված տունը կշարժի այդ
ձայնեն: Միննույն ժամանակ հրեղեն լեզու-
ներ կերևին այն սրահին մեջ՝ ուր կաղո-
թեին, ու այդ լեզուները կհանգչին անոնցմե
ամեն մեկուն գլխուն վրա: Խոստացված
սուրբ Հոգին էր որով կլեցվեին ամենքը: Այդ
վայրկյանն սկսյալ առաքյալները լիովին
կըմբռնեն ճշմարտությունը, իրենց միտքը
կլուսավորվի հավատքի կենդանի լույսով,
իրենց սիրտը կվառվի այնպիսի ջերմ կրա-
կով մը, զոր մահը միայն պիտի կարենար
շիջուցանել: Առաքյալները չունին այլևս ո՛չ
սկսարություն, ոչ վարանում և ոչ ունե եր-
կյուղ: Անոնք այսուհետև պիտի հեռանան
Երուսաղեմեն, պիտի այցելեն երկրագունդի
ծանոթ ու անծանոթ բոլոր ժողովուրդներուն:
Իրենց ձայնը պիտի հնչե բոլոր երկիրներու
մեջ, իրենց խոսքը պիտի արձագանքե մի-
շեմ աշխարհի անդիի ծայրերը. «Ընդ ամե-
նայն երկիր ել բարբառ նոցա և մինչև ի
ծագս աշխարհի եմ խօսք նոցա»: Առաքյալ-
ները պիտի խոսին ամեն անոնց՝ որոնց պի-
տի հանդիպին, ու ամենքը՝ ինչ ալ ըլլա ի-
րենց լեզուն ու բարբառը, որն ալ ըլլա ի-
րենց հայրենիքն ու բնակավայրը, պիտի
հասկնան անոնց խոսքը: Ուրեմն Հիսուս չէր
խաբած գիրենք. ճշմարտության սուրբ Հո-
գին ստուգապես սորվեցուցած էր առաք-
յալներուն ամեն բան: Ատոր ապացույցը այն
է՝ որ անոնք հիմա կխոսին այնպիսի բաներ,
որոնց անծանոթ էին հառաջագույն ու այն-
պիսի լեզուներով, որոնց անգիտակ էին բո-
լորովին: Ահավասիկ հրաշքը, զոր Աստված
ս. Հոգիին միջոցալ գործեց առաքյալներուն
հոգիին մեջ Պենտեկոստեի այս հիշատակե-
լի օրը:

Մենք ալ, խնդրենք ճշմարտության Հոգի-
են՝ որ նույնպես խոսի մեր մտքերուն, նույն-
պես ջերմացնե մեր սրտերը: Խնդրենք որ
մեզ ալ սորվեցնե այն ճշմարտությունները,
որոնց շնորհիվ մարդ կարող է զանազանել

չարը բարիեն, ճշմարիտը սուտեն, արդարը
անիրավեն ու առաջնորդե մեզ պարտակա-
նության ու զոհողության ճամփեն և ցույց
տա այդ ճամփուն վրա գտնված խոչ ու խո-
թերը՝ խոսափելու համար անոնցմե: Թո՛ղ
սուրբ Հոգին, ինչպես առաքյալներուն, մեզ
ալ պարզեն նոր հոգի մը, ոչ թե աշխարհի՝
այլ Աստուծո Հոգին, որպեսզի մեր խոսքերը
ըլլան սուրբ խոսքեր և ոչ թե բարկության,
ստուրջան, անեծքի ու մանավանդ մոլո-
թյուններու առաջնորդող խոսքեր: Աղաչենք
որ սուրբ Հոգին մեզ ալ պարզեն իր այս
առաջին շնորհը:

Բ

Կպատմվի թե երեկո մը, վերջալույսի ա-
տեն, երկու առագաստանավեր իրարու կը-
հանդիպին Հարավային Աֆրիկեի ափերուն
մոտ: Անոնցմե մեկը իր պատկանած տե-
րության դրոշը կկրեր իր կայմին վրա, իսկ
մյուսը որևէ դրոշ չէր պարզած: Առաջինին
նավապետը կասկածելով թե միգուցե ծովա-
հեղձներու նավ մը ըլլա դիմացինը՝ ուժգին
կոչչե նավի ձայնատար փողին մեջեն. «Ո՛վ
եք դուք, ո՞ւսկից կու գաք և ո՞ւր կերթաք»:
Ի պատասխան այս հարցումներուն՝ երկ-
րորդ նավին նավապետը դրոշակ մը կպար-
զե, որուն վրա գրված էր. **Ամերիկա—Նյու-
Յորք**, ինչ որ կնշանակեր, ամերիկացի ենք
ու Նյու-Յորք կերթանք: Ու երկու առա-
գաստանավերը գիրար բարևելէ ետք կշա-
րունակեն իրենց ճամփան:

Մարդոց աշխարհի վրա ցրվելն ետք ժո-
ղովուրդներ ու անհատներ նավերու նման
կյանքի օվկիանոսին վրա շարունակ կխա-
չաձևեին գիրար ու կհարցնեին իրարու. ո՞ւս-
կից կու գանք, ո՞վ ենք մենք և ո՞ւր կեր-
թանք: Եվ գիտուններն ու իմաստասերները,
բանաստեղծներն ու ճարտասանները դա-
րեդար մեկգմելու ետևէ կու գային ու կեր-
թային՝ առանց այդ հարցումներուն հստակ
և ճշգրիտ ու զոհացուցիչ պատասխան մը
գտնել կարենալու: Ու այսպես մարդիկ կա-
տարյալ ու ցավալի անորոշության մը մեջ
կտատանեին այդ հույժ կարևոր հարցումնե-
րուն նկատմամբ: Ու արդարև ի՞նչպես պիտի
կարենային որոշ ու ճշգրիտ պատասխան մը
գտնել այդ հարցումներուն անոնք որոնք
գուրկ էին ճշմարտութեն: Հոռվմայեցի դա-
տավորը՝ Պիղատոս, ամենաանկեղծ խոստո-
վանությունը մը ըրավ այդ մասին: Հարցում
ուղղելով մեր Տիրոջ, որ իր առյալուն քեր-
ված էր ու ճշմարտության վրայոք կխոսեր՝
ըսավ. «Զի՞նչ է ճշմարտութիւն»: Ասով Պի-
ղատոս կխոստովաներ թե խորունկ ու թան-
ձր տգիտություն մը պատած էր բոլոր
միտքերը, նույնիսկ եթե ամենեն զարգացած

ու ամենեւէ մշակված միտքերն ըլլային անոնք:

Ոչ, չունեն ճշմարտությունը սպականությանն ու ծիծաղելի կուսպաշտության անձնատուր այդ ողորմելի աշխարհը:

Իր գիտուններն ու իմաստասերները չէին գիտեր թե ո՞ւր կ'ուզային ու կ'իկերոնին մասն կծաղրեին իրենց կարծեցյալ ստույվածները: Իր վարդապետները, որոնք անձամոթ էին հոգիի էության, չէին գիտեր թե ի՞նչ էին իրենք, կուրանային հոգիի անմահությունը ու կ'վարկաբեկեին ու կ'արհամարհեին կ'ինը, մանուկը, գերին ու աղքատը՝ արժեքավոր անասունի մը չափ ալ չգնահատելով զանոնք:

Իր քրտմերն ու բանաստեղծները իրենք ալ չէին գիտեր ու բան մը չէին ընդմշտներ գերեզմանէն անդին:

Բայց ահա կուգան Ավետարանի պատգամաբերները: Ըսած էր Հիսուս անոնց. երբ սուրբ Հոգին ընդունիք՝ միայն ձեզ համար մի՛ պահեք, այլ փոխանցեցեք զայն բոլոր բարեհաճ մարդոց: Գացեք բոլոր երկիրները, զորս արևը կ'ուսավորե, այցելեցեք բոլոր ազգերը և ուսուցեք անոնց: Մկրտեցեք զանոնք Հորը և Որդւոյն և սուրբ Հոգիին անունով: Ու ամեն անոնք որ մկրտվին ու պահեն ձեր ուսուցածները՝ հավիտենական կյանքը պիտի ժառանգեն:

Պենտեկոստեի օրը առաքյալները ահա կ'ընդունին սուրբ Հոգին: Ի՞նչ պիտի ընեն հիմա: Ու ի՞նչ կարող են ընել, բայց միայն հնազանդի իրենց աստվածային Վարդապետին, այն է՝ առանց հապաղելու և առանց տատամսելու երթալ և ուրիշները հաղորդակից ընել այն ճշմարտության՝ որով լեցված էին իրենք: Ու արդարև առաքյալները կերթան քարոզելու ի վերա տանջաց ինչ որ լսած էին հունկանէ: Անկարելի է որ անոնք լռություն պահեին այլևս: Եթե ուրիշները գիրենք լռելու ստիպեին՝ պիտի պատասխանեին. մենք չենք կարող չխոսիլ ու չքարոզել ճշմարտությունը:

Ու առաքյալները կ'քարոզեն, հախ Երուսաղեմի հրապարակներուն վրա և Հրեաստան ու Սամարիա: Այս ամբողջ աշխարհը իրենց մեջ բաժնելով՝ կ'արշավեն նվաճելու համար խալկիի ու մահվան ստվերներու մեջ մատող հոգիները: Անոնք Հիսուսի խաչով զինված՝ կ'հասնին բոլոր ափունքները, ոտքի տակ կ'առնեն անտառները, լեռներն ու անապատները, կ'մտնեն քաղաքները, գյուղերն ու ավանները ու ամեն իրենց հարցում ուղղողներուն՝ թե ո՞վ ենք մենք, ո՞ւր կ'ուզանք և ո՞ր կերթանք, կ'պատասխանեն. դուք պատկերն եք Աստուծո, Աստուծոն կու գաք և առ Աստված պիտի վե-

րադառնաք: Երուսաղեմի, Անտիոքի, Աթենքի և Հռոմի մեջ հնչող հավատքի այս աղաղակը պիտի արձագանքեր այնուհետև որքան խոնարհ հյուղակներու՝ նույնքան շքեղ պալատներու մեջ, որքան փառահեղ ուսումններու՝ նույնքան աննշան գյուղակներու մեջ:

Եվրոպայի՝ Ասիո և Աֆրիկէի թե՛ քաղաքակիրթ և թե՛ բարբարոս ժողովուրդները, Խաչի դրոշին տակ, իրարու հետ պիտի մրցեին այնուհետև ժառանգելու համար երկինքը: Այնպես որ, հակառակ հալածողներու բռնության, որոնց սուրբ միլիոնավոր քրիստոնյաներ պիտի հնձէր, Տերսուղիանոս, շուրջ 198 թվականին, պիտի գրեր Հռոմի մեջ թագավորող հերթաճոռ Կեսարին. «Մենք քրիստոնյաներս կ'լեցնենք ձեր քաղաքները, ձեր կղզիները, ձեր ավաններն ու դաշտերը: Եթե մենք լքենք քաղաքները ու փախուստ տանք դէպի անապատները, այն ատեն դուք պիտի սուկաք ձեր շուրջը տիրող ամայութենէն»:

Ասոնք են, եղբարք, այն հրաշքները զորս սուրբ Հոգին կ'ատարեց առաքյալներուն ու անոնց հաջորդներուն քարոզությանը: Այդ հրաշքները կ'ընկած են դարեդար, անոնք տակավին կ'շարունակվին կ'ատարվի ամեն օր ու ամենուրեք, վասնզի ճշմարտության Հոգին կ'ործե անդադար և առաքյալներն ու անոնց հաջորդները այդ Հոգիով լեցված՝ միշտ եղած են քարոզները ճշմարտության:

Աստվածային այդ ճշմարտությունը մենք ալ ունինք, եղբարք: Ուրախ ըլլանք ասոր համար. Աստուծո մեզ շնորհած ամենաթանկագին պարգևն է այն: Սուրբ Հոգիի գալուստյան այս հրաշալի օրը խնդրենք Աստուծոն բնավ ձեռքէ չհանել այդ պարգևը:

Պահենք մեր հավատքը և թո՛ղ անիկա մեր առաջնորդն ըլլա մեր ամեն գործերուն մեջ ու վստահ ըլլանք թե այդ հավատքին լույսով երբեք պիտի չխտորինք պատիվի ու առաքինության շիտակ ճամփէն: Ինչ որ ալ խորհին, ինչ որ ալ ըսեն ուրիշները՝ սա ստույգ է թե անկեղծ հավատացյալները միայն ամենեւն օգտակար մարդիկը եղած են թե՛ իրենց հայրենիքին, թե իրենց եղբայրներուն:

Այդ, պահենք մեր հավատքը ու աշխատինք զայն փոխանցել անոնց՝ որ զրկված են այդ հավատքէն և կամ անոնց՝ որոնց մեջ թմրած է հավատքը: Մենք ալ մեր ընտանիքներուն, մեզ շրջապատողներուն մեջ ըլլանք մեյմեկ առաքյալներ, սուրբ Հոգիի պաշտոնյաներ:

Խոսքս մասնավորապես կ'ուղղեմ ընտանիքի հայրերուն ու մայրերուն, որոնց Աստված զավակներ ունենալու երջանկությունը

պարզեցնում է: Դուք, հայրեր ու մայրեր, ձեր զավակներուն համար եղեք առաքյալները ճշմարտության ու առաջին օրեն ճշմարտությունը՝ իբրև առաքինության բեղմնավոր հունձներ՝ սերմանեցեք անոնց սրտերուն մեջ: Ու վստահ եղեք թե թերևս օր մը արցունքներու մեջ ձեր ցանած բարի սերմերու ծաղկիլն ու պտղաբերիլը պիտի տեսնեք ուրախությամբ:

Մենք ամենքս, այո՛ ամենքս, սիրելի եղբայրներ, պահենք մեր հավատքը ու պաշտպանենք զայն հավատքի թշնամիներուն դեմ: Մեր օրերուն, ինչպես ամեն ժամանակներու մեջ, դժբախտաբար պակաս չեն ալնալիսները, որոնք Ավետարանի լույսը զրկանի տակ թաքցնել կուզեն, պակաս չեն ամբարիշտները, ազատախոհները, փառամուլները՝ որոնց սրտերուն մեջեն շիջած ըլլալով հավատքի լույսը՝ կապատամբին Աստուծոյ դեմ ու կաշխատին ուրիշներու հոգիներուն մեջեն ալ շիջուցանել ճշմարտության Հոգին: Մենք սակայն հաստատուն մնանք մեր հավատքին մեջ՝ մեզ նեցուկ ունենալով ավետարանական ճշմարտությունը,

այսինքն Հիսուսի Քրիստոսի կրոնքը իր վարդապետություններով ու բարոյական օրենքներով, իր պաշտամունքներով ու խորհուրդներով: Ունենանք միևնույն արիությունը, միևնույն եռանդն ու հարատևությունը, զորս մեղավորներն ու ամբարիշտները ունին՝ պաշտպանելու համար չարությունն ու մոլությունները: Ու այս դյուցազնական պայքարեն պատվով դուրս ելլելու համար բնավ չմոռնանք թե հաղթանակը միշտ Հիսուս Քրիստոսն ու Անոր եկեղեցին կտանին, վասնզի գրված է թե աստվածային ճշմարտությունը կա ու պիտի մնա հավիտյան:

Սուրբ Հոգիի գալստյան այս հրաշալի տոնիս օրը աղոթենք մասնավորապես՝ որ Տեր Աստված հաղորդակից ընէ մեզ այն շնորհներուն, զորս սուրբ Հոգին ծավալեց այսօր առաքյալներուն վրա, պահպանէ մեզ կյանքի մավաթելություններեն ու հասցնէ ամենքս խաղաղության անքույթ մավահանգիստը: Ամեն:

(«Սիոն», 1943 թ., №№ 5—6, էջ 71):

